

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 2019 թվականի գործունեության վերաբերյալ

2019 թվականին տարածքային և կենտրոնացված հաշվառման է վերցվել մարզի 16 առանց ծնողական խնամքի մնացած 16 երեխա՝ Ջերմուկ, Եղեգնաձոր, Մալիշկա և Եղեգիս համայնքներից: Սոցիալապես անապահով առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա տեղավորվել է «ՀՕՖ- երեխայի աջակցության կենտրոնում» /Եղեգիս և Ջերմուկ համայնք/: Տրվել է դրական եզրակացություն շուրջօրյա խնամքի հաստատությունից կենսաբանական ընտանիք վերադարձող 9 երեխայի / Մալիշկա՝ 3 և Եղեգիս՝ 6 երեխա/: Վերջիններին հատկացվել է բնաիրային աջակցություն: Կենտրոնացված հաշվառումից հանվել է առանց ծնողական խնամքի մնացած 3 երեխա /Եղեգիս՝ 2, Ջերմուկ՝ 1 համայնք /:

ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժինների ԱԳ և ԸԲԿ խմբերի (անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման խումբ) հետ համատեղ ապահովվել է 21 / Եղեգնաձոր՝ 11, Ջերմուկ՝ 4, Վայք՝ 6/ իրավախախտ երեխայի իրավունքների և շահերի պաշտպանություն, քննչական մարմիններում ապահովվել է բաժնի համապատասխան մասնագետի մասնակցությունը 5 անչափահասի հետ կատարված քննչական գործողություններին / Վայքի և Զատիթափի համայնքներ/:

Ապահովվել է 57 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների երեխաների և նրանց կենսապայմանների սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրություն, սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը: Մարզի 10 ներառական կրթություն իրականացնող դպրոցներում կրթություն են ստանում 161 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Ապահովվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 32 երեխայի «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարումը և սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպվել է խմբային քննարկումներ:

Մարզի 6 /Վայք, Մալիշկա, Արենի 2, Եղեգնաձոր, Գլաձոր / կոնֆլիկտային ընտանիքներում բռնության կանխարգելման, ընտանիքի հաշտության վերականգնման ուղղությամբ իրականացվել է համագործակցված աշխատանք դատախարակական և ՏԻ մարմինների հետ:

Իրականացվել է հաշվառված որդեգրողի 2 թեկնածուի և որդեգրման ենթակա երեխաների տվյալների համադրում: Վայք համայնքից 2 քաղաքացի հաշվառվել է որպես որդեգրողի թեկնածու:

Արդարադատության մարմինների հետ համագործակցության շնորհիվ ձեռք է բերվել մեկ երեխայի ծննդյան վկայական /Վայք համայնք/:

Ապահովվել է ընտանեկան տարաձայնություն ունեցող, ամուսնալուծության գործընթացում գտնվող 5 ընտանիքներում ծնողների իրավունքների պաշտպանությունը՝ ազատ շփվելու իր հետ չապրող երեխայի հետ / Վայք, Մալիշկա 2, Եղեգիս, Արենի, Եղեգնաձոր /:

Դպրոցի տնօրինության և ծնողի հետ համագործակցության շնորհիվ կրթությունից խուսափող 3 երեխա վերադարձել է հանրակրթություն / Եղեգնաձոր, Ջերմուկ և Ագարակաձոր /:

ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի № 751-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ մասի 1-ին կետի 17-րդ և 18-րդ ենթակետերի պահանջներով ստեղծվել է բազմամասնագիտական խումբ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման և վերապատրաստման, խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դատախարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով:

Թարմացվել է մարզի երկկողմանի / 4 երեխա / և միակողմանի ծնողագուրկ/ 170 երեխա /, մանկուց հաշմանդամ /129երեխա /, 6 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների մասին տեղեկատվական շտեմարանը/ 35 երեխա/:

Համագործակցել ենք հանրապետության գործադիր մարմինների, երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջազգային, հասարակական կազմակերպությունների և բարեգործական հիմնադրամների հետ: Սկսել է գործել «Մանկական զարգացման հիմնադրամի» Վայքի մասնաճյուղը, մարզի վերարտադրողական առողջական խնդիրներ ունեցող, ինչպես նաև բազմազավակ ընտանիքները կօգտվեն «Իմ քայլը » հիմնադրամի աջակցությունից, «Գրանդ հոլդինգ » ընկերության աջակցության շնորհիվ մարզի 6 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները կստանան սոցիալական աջակցություն, իրականացվում է համագործակցված աշխատանք Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ «Համայնքային ինտեգրված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի ներդրման ուղղությամբ: Մարզի սոցիալապես անապահով և առողջական խնդիրներ ունեցող 77 ընտանիքի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է «Առողջության առաջնային պահպանման Վայոց ձորի հիմնադրամ »-ին՝ սոցիալական աջակցության համար:

Բաժինը համագործակցել է նաև ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների (ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակ, «Յունիսեֆ», «Երեխաների պաշտպանության ցանց», «Օքսիջեն», «Դիակոնիա» ԲՀ, «Մանկական զարգացման հիմնադրամ», «Փրկեցեք երեխաներին » ՀԿ, «Բարի մամա» ԲՀ, « Վորլդ վիժն» ՀԿ, Լայթ հաուս» ԲՀ , «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ, ՀՕՖ, ՍՕՍ մանկական գյուղեր) և այլ կառույցների հետ, մասնակցել ոլորտին նվիրված կլոր սեղանների, դասընթացների և քննարկումների:

Իրականացվել է ավելի քան 100 քաղաքացու ընդունելություն, անհրաժեշտության դեպքում տրվել է խորհրդատվական օգնություն:

Լիազորությունների շրջանակում նախապատրաստվել է բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, ստացված նախագծերի շրջանակում ապահովվել է քննարկումներ, դիտարկումներ:

Բաժինը ոլորտի մասով մասնակցել է մարզի համայնքներում իրականացված մասնագիտական և վարչական հսկողության աշխատանքներին:

Առաջարկություն է ներկայացվել մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ենթակա աշխատողների վերապատրաստման վերաբերյալ:

Ընդհանուր բաժնի պետ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

17/01/2020թ.